

ՍԵՊՏԵՄԲԵՐ 21-Ի ԱՌԹԻ ԽՈՀԵՐՍ

Posted on September 25, 2018 by Keghart



Category: [Opinions](#)



Դոկտ. Մինաս Գոճայեան, Լոս Անճելըս, 21 Սեպտեմբեր 2018

Անկախութիւն յայտարարելը չ'երաշխաւորեր իսկական անկախ պետութեան մը գոյատեւումը, այլ հարկաւոր է պայքարիլ ու տեր կենալ անկախ պետութեան: Սեպտեմբեր 21-ը Հայաստանի Երրորդ Հանրապետութեան ստեղծման տարեդարձն է, իսկ 2018 Մարտ-Ապրիլ ամիսներուն Հայաստանի մէջ կատարուած յեղափոխութիւնը, որուն գլխաւոր կերտիչն էր Նոյնիքն մեր հայրենիքի ժողովուրդը՝ իսկական տերը երկրին, Նոր յոյսերով ու ակնկալութիւններով, իսկական ժողովրդավարութեամբ կը փափաքէր ու կը փափաքի կերտել արդար պետութիւն մը: Այսօրուան հրամայական պահանջնքն է ՏԷՐ ԿԵՆԱԼ Ժողովուրդի արդար ցանկութեան: Անկախութեան տարեդարձը պէտք է զգաստացնէ ու անգամ մը եւս առիթ տայ հայ ժողովուրդի բոլոր խաւերուն մէկդի դնել անձնական, Նեղ-կուսակցական շահերը եւ Նուիրուիլ ժողովուրդի արդար պահանջներուն իրականացման:

Այսօր մեր Նոր իշխանութիւնները եւ անոնց ղեկավարները կը փորձեն ճիշդ ուղիի վրայ դնել անցնող տարիներու ապաշնորհ գործելածելը իրարայաջորդ իշխանութիւններու, հետեւաբար մենք կա՛մ պէտք է սատար կենանք Նոր իշխանութեան զօրացման եւ կամ վերադառնալ Նախկինին: Ուստի, Սեպտեմբեր 21-ը առիթ մը եւս պէտք է տայ մեզի վերականգնելու մեր արժանապատուութիւնը եւ ապագային Նայելու վառ յոյսերով:

